**ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱՋՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.թ.*

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական ներուժի (ՍՏՆ) ուսումնասիրությունը կարող է հետապնդել նպատակներ՝ սկսած տարբեր երկրների տնտեսական հզորությունների համեմատությունից մինչև կապիտալի ներդրման կոնկրետ օբյեկտների ընտրությունը: Այս կապակցությամբ ՍՏՆ-ի որոշման կամ գնահատման համար որևէ ունիվերսալ մեթոդի փնտրտուքը բավականին անարդյունավետ է թվում կամ ոչ այնքան իմաստավորված: Հետևաբար, խոսքը կարող է գնալ այս կամ այն տարածաշրջանի ներուժի գնահատականների համակարգի մասին՝ կախված ուսումնասիրության նպատակներից: Մասնավորապես, տարբեր մակարդակի կառավարման մարմինների առջև մշտապես ծառացող կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է տարածաշրջանի զարգացման բնագավառում դրա առանձնահատկությունների և «նեղ տեղերի» բացահայտումը, ինչը հնարավոր չէ իրականացնել առանց համալիր համեմատական վերլուծությունների:

Համալիր գնահատման գլխավոր դժվարությունը կայանում է առավել ներկայացուցչական և համեմատաբար անկախ վիճակագրական ցուցանիշների (ինդիկատորների) ընտրության և համալիր չափանիշների ձևավորման համար այդ ցուցանիշների համադրման սկզբունքների մշակման մեջ, որոնց օգնությամբ հնարավոր է օբյեկտիվ և ակնառու կերպով ցույց տալ տվյալ տարածաշրջանում ձևավորված իրական պատկերը: Համալիր ցուցանիշները կարող են ունենալ տարբեր բնույթ և կառուցման տարբեր ալգորիթմներ, որոնցից ներկայումս ամենահաճախ կիրառվողներից է համախառն ներքին (տարածաշրջանային) արդյունքը, և որն ինտեգրում է ավելացված արժեք ստեղծող գործունեության բոլոր տեսակների արդյունքները:

Ընդհանուր առմամբ, այս խնդրի լուծումն անցնում է երեք փուլեր.

1. Հատկությունների (տարածաշրջանի հիմնական գործոնների) կամ դրանց արտաքին ու ներքին միջավայրի գործոնային վերլուծության խնդիր: Այս փուլում գնահատվում, ստուգվում և ձևավորվում է չափանիշների հավաքածուն, իսկ չափանիշներն էլ, իրենց հերթին, բաժանվում են այս կամ այն իմաստով մոտիկ խմբերի (օրինակ՝ նույն խմբում կարող են ընդգրկվել այն չափանիշները, որոնք բնութագրում են արտադրության կազմակերպատեխնիկական ու տնտեսական մակարդակները, ռեսուրսներով ապահովվածությունը և այլն): Ամենացածր մակարդակի բազմաթիվ ցուցանիշները բաժանվում են խմբերի՝ ըստ ընտրված համադրելի (համանման) բնութագրիչների (չափանիշների): Կարևոր է, որ այդ ցուցանիշները լինեն համեմատելի՝ օգտագործվող չափանիշների տեսանկյունից: Օրինակ՝ բավականին դժվար է տալ միանշանակ մեկնաբանություն, երբ ծրագրավորվում է քաղաքային բնակչության կողմից սպառվող խմելու ջրի ծավալը, քանի որ սպառման մեծ ծավալը դեռևս չի նշանակում ավելի լավ ջրամատակարարում: Նույնը կարելի է ասել նաև, օրինակ, ցանքատարածությունների և կաթնատու հոտի համեմատության ժամանակ (այստեղ որոշիչը, բնականաբար, հանդիսանում է արտադրանքի թողարկումը): Ցուցանիշները չպետք է նաև կրկնեն միմյանց կամ լինեն խիստ կորելացված:

2. Օբյեկտների տիպոլոգիայի կառուցման խնդիրը, որի լուծման ուղիները բավականին հանրահայտ են:

3. Դինամիկ սխեմաների տիպոլոգիայի կառուցման խնդիրը: Կառուցվում են դինամիկայի սանդղակներ (շկալաներ), ուսումնասիրվում են այդ սանդղակներով օբյեկտների տեղաշարժերը և կառուցվում օբյեկտի զարգացման դինամիկ սխեմաների տիպոլոգիաները:

Հիմնվելով համակարգային մոտեցման վրա՝ անհրաժեշտ է նաև տարբերակել <u>համակարգային</u> բնութագրիչները: Ընդ որում, ցուցանիշների բաժանումը (դասակարգումը) կատարվում է ըստ փոփոխականների կատեգորիաների՝ համակարգի դինամիկայի ձևավորման գործում դրանց ունեցած դերին համապատասխան: Այստեղ կարելի է առանձնացնել <u>վիճակի</u> ցուցանիշները, որոնք, իրենց հերթին, խմբավորվում են դրանց փոփոխության բնութագրական արագություններին համապատասխան (մշտական, դանդաղ փոփոխվող, որի բնութագրական մասշտաբը կազմում է մեկ տարի, և արագ փոփոխվող, որի բնութագրական մասշտաբը կազմում է մեկ շաբաթ կամ մեկ ամիս): Մյուս կատեգորիան կազմում են փոփոխությունների <u>արագության</u> ցուցանիշները: Տնտեսագիտության տեսության մեջ առանձնացվում են նաև <u>պահուստները</u> (օրինակ՝ հիմնական ֆոնդերի արժեքը, զբաղվածների թվաքանակը և այլն) և <u>հոսքերը</u> (շահույթ, համախառն ներքին արդյունք և այլն): Կարելի է լրացուցիչ դիտարկել նաև վիճակի և հոսքերի առումով <u>կառուցվածքային</u> փոփոխությունների դինամիկան:

Վարքագծային մոտեցմամբ տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատման ժամանակ, մեր կարծիքով, ամենաարդյունավետ մեթոդը վարկանիշավորումն է, որը թույլ է տալիս որոշել տվյալ տարածաշրջանի տեղը մյուսների շարքում: Այս դեպքում անհրաժեշտ պայմաններ են հանդիսանում այն գործոնների համադրելիությունը, որոնք տվյալ ժամանակահատվածում ազդում են սոցիալ-տնտեսական համակարգի վրա, և դրանց ներքին կառուցվածքային համապատասխանությունը: Այնպիսի գնահատականը, որը չի գնահատում ՍՏՆ-ի բացարձակ մեծությունը (արժեքային արտահայտությամբ), սակայն հարաբերական պատկերացում է տալիս տարածաշրջանի ՍՏՆ-ի չափերի մասին, կարելի է անվանել <u>ՍՏՆ-ի վարկանիշ</u>:

Վարկանիշերի կառուցման պարզագույն և հաճախ օգտագործվող եղանակը հանդիսանում է ռանգերի (ըստ աճման կամ նվազման կարգի առանձին ցուցանիշների կարգավորված համարների) հանրագումարը: Երբեմն այդ ռանգերը հանրագումարի են բերվում որոշակի կշիռների միջոցով: Այս եղանակի թերությունը

կայանում է նրանում, որ ըստ մեծության՝ իրարից շատ տարբերվող ցուցանիշները կարող են ունենալ մոտ ռանգեր կամ էլ հակառակը՝ արդյունքների բարձր խտության պարագայում ցուցանիշների աննշան տարբերությունները կարող են հանգեցնել ռանգերի նշանակալի տարբերակման (դիֆերենցման):

Դրված խնդրին համեմատաբար ավելի համապատասխան է թվում ոչ թե ռանգերի կամ սանդղակների, այլ ցուցանիշների ստանդարտացված փաստացի մեծությունների օգտագործումը: Օրինակ՝ X ցուցանիշի ստանդարտացված մեծությունը կարելի է հաշվարկել $(X - X^0) / \sigma$ տիպի բանաձևերից մեկի միջոցով, որտեղ որպես ելակետային կետ հանդիսացող $X^0$ ցուցանիշ՝ կարող են հանդես գալ $X_{առ}$, $X_{նվ}$ կամ $X_{միջ}$ ցուցանիշները, իսկ որպես σ կարող է հանդես գալ ցրման համապատասխան չափը (միջին քառակուսային շեղումը, $X_{առ} - X_{նվ}$ մեծությունը և այլն): Եթե որպես նորմավորող բաժանարար օգտագործվում է որոշակի ֆիքսված մեծություն (նորմատիվ), ապա վարկանիշը կարող է ցույց տալ ոչ միայն վերլուծվող օբյեկտների փոխադարձ դիրքերը, այլև ժամանակի ընթացքում դրանց վիճակների փոփոխությունները:

Կարևոր է նշել, որ ինչպես ռանգային, այնպես էլ ստանդարտացված բալային գնահատման մեթոդը կարող է կիրառվել մասնավոր բալային գնահատականների մեծությունների ճշգրտմամբ՝ նախապես տրվող կշռային գործակիցների օգտագործման հիման վրա: Սակայն, այդպիսի «հարկադիր» ճշգրտումը կտրուկ ուժեղացնում է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը և, ըստ էության, կարող է արդարացված լինել միայն պետական տարածքային քաղաքականության ընթացիկ, կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, այդ թվում՝ նաև տարածաշրջանների տնտեսական և սոցիալական զարգացման կանխատեսումների մշակման դեպքում:

Կարևոր է հանդիսանում այն բաղադրիչների ռացիոնալ զուգակցման ապահովումը, որոնք ունեն կայուն բնույթ կամ այս կամ այն չափով ենթակա են տնտեսական ընթացիկ կոնյունկտուրայի ազդեցությանը: Ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ բաղադրիչների այս երկրորդ խումբը գլխավորապես վերաբերում է ոչ այնքան տարածաշրջանային զարգացման ձեռք բերված մակարդակի բնութագրմանը, որքան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ընթացիկ իրավիճակին: Սակայն, ինտեգրալ գնահատականի մեջ հենց այս բաղադրիչների ներառումը համեմատաբար նախընտրելի է «հետադարձ կապի մեխանիզմի» իրացման տեսանկյունից՝ պետական կառավարման տարբեր մակարդակներում կարգավորիչ որոշումների ընդունման ժամանակ:

Ժամանակակից շատ հետազոտություններում ՍՏՆ-ի քանակական գնահատման մեթոդիկան մանրամասն չի բացահայտվում, ինչը դժվարացնում է դրա վերլուծությունը և ստացված արդյունքների համեմատությունը: Որպես հակառակ օրինակ, որտեղ բավականին մանրամասն բացահայտված է այդ մեթոդիկան, կարելի է նշել Օ. Վ. Տերեշչենկոյի «Քաղաքների ներուժը» աշխատությունը: Դրանում քաղաքի ներուժը սահմանվում է որպես քաղաքի տնտեսական և սոցիալական զարգացման համալիր ցուցանիշների համակարգ, որի մակարդակը պայմանավորվում է հասարակական-տնտեսական տվյալ ֆորմացիայի ժողովրդագրական ներուժի, քաղաքային միջավայրի և տնտեսական բազայի փաստացի և առավելագույն հնարավոր (էտալոնային) չափանիշների համապատասխանության մակարդակով և դրանց փոխադարձ կապերով: Ներուժի գնահատման համար որոշվում է ընտրված ցուցանիշների (ըստ երեք բլոկների՝ ժողովրդագրական ներուժ, տնտեսական բազա և քաղաքային միջավայրի վիճակ) գործոնային ծանրաբեռնվածությունը (տեղեկատվատևողությունը), կարգային դասակարգման ու գլխավոր կլաստերների մեթոդների հիման վրա առանձնացվում են տիպոլոգիական խմբերը (ըստ օբյեկտների մոտիկության կամ նմանության) և տիպոլոգիայում օբյեկտի կարգը (ըստ «լավ-վատ» առանցքի)[1]:

Ներուժի օգտագործման մակարդակի գնահատումը ենթադրում է որոշել այդ մակարդակը բնութագրող ցուցանիշները և համեմատել դրանք բազայի (էտալոնի) հետ, այսինքն՝ անհրաժեշտ է համեմատության բազա: Մաթեմատիկական տեսանկյունից այդ համեմատությունը համեմատություն է համարիչի և հայտարարի միջև: Այսպիսով, ՍՏՆ-ի օգտագործման մակարդակի որոշման համար անհրաժեշտ է ձևավորել ցուցանիշների համակարգ, որոնք բնութագրում են արտադրության արդյունքը (համարիչ) և այն պայմանավորող ներուժը (հայտարար): Այս նպատակով կատարվում է մասնավոր ցուցանիշների ընտրություն և կառուցվում ընդհանրացնող ցուցանիշներ, որոնք բնութագրում են ՍՏՆ-ն և դրա օգտագործման աստիճանը, մշակվում են ՍՏՆ-ի օգտագործման ընդհանրական ցուցանիշների ստացման մեթոդներ, ինչպես նաև դասակարգման մեթոդներ, որոնք միավորված են ըստ ներուժի փաստացի մեծության և դրա օգտագործման մակարդակի, ինչն էլ նշանակում է, որ անհրաժեշտ են ձեռք բերված ներուժի մեծությունը բնութագրող և որոշակի ներուժով պայմանավորված արտադրության արդյունքները բնութագրող ցուցանիշների երկու համակարգեր:

ՍՏՆ-ի վարքագծային գնահատման մոտեցմանը համապատասխան՝ ՍՏՆ-ի մեծության հաշվարկման համար ենթադրվում է օբյեկտի (տարածաշրջանային տնտեսական համալիրի) մանրամասն հետազոտում՝ նպատակ ունենալով բացահայտել դրան բնորոշ անհամամասնությունները, «նեղ տեղերը» և այդ հիմքի վրա որոշել հնարավորությունները («իդեալական» վիճակը) ու համադրել իրական ցուցանիշների հետ: Մեր կարծիքով, տարածաշրջանի ՍՏՆ-ի ուղիղ գնահատումը՝ ռեսուրսների առավելագույն արտադրողականության տեսանկյունից, քիչ արդյունավետ է: Տարաբնույթ տեղեկատվության (օրինակ՝ ըստ հիմնական ֆոնդերի) մեծ ծավալների ագրեգացման անհրաժեշտությունը, արտադրական ֆունկցիաների կառուցումը՝ հաշվի առած տարբեր ճշգրտումները և ենթադրությունները, հանգեցնում է ելակետային տեղեկատվության ծավալների շարունակական աճի, իսկ ստացված արդյունքները, որպես կանոն, լինում վիճելի:

Այդ իսկ պատճառով, թվում է, որ սոցիալ-տնտեսական համակարգի համալիր գնահատման և բնութագրման համար ավելի պարզ տեսք ունի երկրորդ տարբերակը՝ <u>բազմաթիվ օբյեկտների վիճակագրական համեմատական վերլուծությունը՝ նպատակ ունենալով բացահայտելու առավել դինամիկ և առավել արդյունավետ օբյեկտները՝ համեմատած մյուսների հետ</u>: Ընդ որում, այս դեպքում «իդեալական» վիճակի

[1] Տես Терещенко О. В. §Потенциал городов¦, Новосибирск, 1990, էջ 21-22

մասին տեղեկատվության առկայությունը պարտադիր չէ, քանի որ այն ոչ ակնհայտ ձևով, բայց արդեն ընդգրկված է լավագույն օբյեկտների ցուցանիշներում՝ որպես տվյալ պայմաններում առավելագույն հնարավորը: Գլխավորն այստեղ կայանում է նրանում, որ օբյեկտներն ըստ իրենց կառուցվածքային բնութագրերի՝ շատ չտարբերվեն մեկը մյուսից: Նշենք նաև, որ երկու մոտեցումն էլ հավասարապես կարևոր է և կիրառելի համապատասխան խնդիրների լուծման համար: Սակայն, հաճախ շատ ավելի հեշտ է տեղեկատվություն ստանալ նեղ շրջանակի ցուցանիշների վերաբերյալ՝ շատ օբյեկտների (տարածաշրջանների) համար, քան շատ ցուցանիշներ՝ մեկ օբյեկտի համար:

Այսպիսով, ՍՏՆ-ի գնահատման մեթոդիկան, մեր կարծիքով, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- լինի հեշտ ֆորմալիզացվող, հետևաբար հիմնված լինի վիճակագրական առկա ցուցանիշների համակարգի վրա,
- օբյեկտիվորեն արտացոլի տարբեր կողմերից տարածաշրջանի զարգացման գործոնների վիճակը՝ հաշվի առնելով նաև անցումային շրջանի առանձնահատկությունները,
- լինի համեմատաբար սեղմ, այսինքն՝ օգտագործվող ցուցանիշների քանակը պետք է շատ չլինի,
- ապահովի ցուցանիշների համակարգի ձևափոխություններ՝ կապված տարածաշրջանների տիպոլոգիական առանձնահատկությունների հետ:

Մեր կարծիքով, ներուժի ընդհանրական ցուցանիշի որոշման համար ճիշտ կլինի օգտագործել այն մոտեցումը, որը կապված է ցուցանիշի բազմաչափ ռանգավորման (սանդղակավորման) և ընդհանրական ռանգային բնութագրիչների հաշվարկման հետ: Տարածաշրջանի ներուժի համալիր գնահատման առումով կիրառելի է «բազմաչափ միջինի» մեթոդը, բայց այն տարբերությամբ, որ վերցվի ցուցանիշի հարաբերությունը ոչ թե միջին մեծությունը, այլ շարքի (կարգի) առավելագույն և նվազագույն մեծությունների տարբերությունը: Հանրագումարի բերելու ժամանակ նվազագույն ներուժ ունեցող տարածաշրջանը կունենա զրոյին մոտ վարկանիշ, իսկ առավելագույն ներուժ ունեցող տարածաշրջանը՝ համապատասխանաբար զրոյից առավելագույնս հեռու վարկանիշ: Հատկապես այս մեթոդի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ տեղերի պարզ գումարման եղանակի օգտագործման դեպքում ցուցանիշների դիֆերենցիացիան (այսինքն՝ այն, թե որքանով է մեկ տարածաշրջանը տարբերվում մյուսից) չի արտացոլվում: Բազմաչափ միջինի մեթոդի օգտագործման պարագայում, հարաբերելով միջին մակարդակին, տարբեր ցուցանիշների վարիացիայի տարբեր չափերի հաշվին տեղի է ունենում հանրագումարային ինդեքսի աղճատում (աղավաղում): Լավագույն և վատագույն մեծությունների ինտերվալի վրա հարաբերման հաշվարկի բանաձևի օգտագործումը «հարթեցնում» է այդ գործոնի ազդեցությունը՝ ակնառու կերպով ցույց տալով ոչ միայն տարածաշրջանի տեղը, այլև դրանց միջև դիֆերենցիացիան: Բացի այդ, ի տարբերություն շարքի առավելագույն (կամ նվազագույն) մեծության վրա պարզ հարաբերության, առավելագույն և նվազագույն մեծությունների միջև դիապազոնի օգտագործումը թույլ է տալիս ստանալ բնութագրիչի մեծ վարիացիայով շարք (այսինքն՝ ավելի տեղեկատվատարողունակ շարք) և վիճարկել ինչպես դրական, այնպես էլ բացասական մեծությունները:

Կարևոր փուլ է հանդիսանում ցուցանիշների հավաքածուի որոշումը, որոնք պետք է օգտագործվեն գնահատման համար: Ինչպես հայտնի է, տնտեսական զարգացման մակարդակը որոշելու համար համաշխարհային տնտեսությունում սովորաբար օգտագործվում է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի արտադրության ցուցանիշը՝ ելնելով այն բանից, որ զարգացման մակարդակը երկարաժամկետ, ռազմավարական և բազմասպեկտ հասկացություն է, և այն առաջին հերթին անհրաժեշտ է որոշել կուտակված տնտեսական ներուժի ծավալների ու կառուցվածքի տվյալների հիման վրա (ներառյալ հիմնական ֆոնդերը, ենթակառուցվածքային համակարգերը, կադրային ներուժը, գիտատեխնիկական ներուժը և այլն): Նորմալ պայմաններում, այսինքն՝ տնտեսության աստիճանական զարգացման դեպքում այդ ներուժն իրացվում կամ արտացոլվում է ՀՆԱ-ի մեջ: Ընդ որում, որքան բարձր է ներուժը, այնքան, որպես կանոն, շատ արդյունք է արտադրվում մեկ շնչի հաշվով: Սակայն, ճգնաժամային զարգացման պայմաններում այդ կախվածությունը ժամանակի առանձին հատվածներում կարող է խաթարվել, և հետևաբար, արտադրության մասշտաբները բնութագրող միայն մեկ ցուցանիշի հիման վրա չի կարելի վստահաբար եզրակացություններ կատարել տարածաշրջանի զարգացման մակարդակի վերաբերյալ: Այդ պատճառով, արտադրության ծավալների հետ միասին, մենք առաջարկում ենք հաշվի առնել նաև ֆոնդերի առկայության, բնակչության կրթական մակարդակի, տրանսպորտային ենթակառուցվածքներով տարածքի հագեցվածության և ներդրումային գրավչության ցուցանիշները: Սա վերաբերում է ոչ միայն ՀՆԱ-ին, այլև մյուս ցուցանիշներին, օրինակ՝ արդյունաբերական արտադրության ծավալներին և այլն, որոնք անցումային փուլում բավարար համարժեքությամբ չեն արտացոլում տնտեսական զարգացման մակարդակը, ուստի անհրաժեշտ է կատարել ՍՏՆ-ի բազմաչափանիշային գնահատում, որը թույլ կտա «հարթել» առաջացող խեղաթյուրումները:

Գոյություն ունեն, այսպես կոչված, պոտենցիալ ՀՆԱ-ի գնահատման մեթոդներ, որոնց դեպքում օգտագործվում են արտադրական ֆունկցիաները: Այն գործոնները, որոնք ամբողջությամբ չեն օգտագործվում, հանդիսանում են կամ աշխատանքը, կամ էլ կապիտալը (արտադրական ֆոնդերը): Գործազուրկների առկայությունը կամ արտադրական կարողությունների թերբեռնվածությունը մեկնաբանվում են որպես պոտենցիալ ՀՆԱ-ից ուղղակի հանվող մեծություններ (հաշվի առած նաև գործազրկության և թերբեռնվածության բնական մակարդակները): Ընդ որում, այստեղ գործում է ռեսուրսային նվազող բեռնվածության սկզբունքը, այսինքն՝ որքան տնտեսությունը մոտ է արտադրական հզորությունների լրիվ օգտագործման մակարդակին կամ լրիվ զբաղվածությանը, այնքան փոքր է գործազրկության մակարդակի կրճատումից և հզորությունների բեռնվածության մակարդակի բարձրացումից ստացվող արդյունքը: Մասնագետների կողմից առաջարկվում է

նաև պոտենցիալ ՀՆԱ-ի գնահատման պարզեցված դետերմինիստական մոդել, որը հիմնված է աշխատանքի արտադրողականության և ֆոնդահատույցի վրա, և ունի հետևյալ տեսքը.

$Y^* = 1/2\,[(\lambda L(1 - w^*) + bF(1 - p^*)]$, որտեղ՝

$Y^*$-ը՝ պոտենցիալ ՀՆԱ-ն է,

$\lambda$-ն՝ աշխատանքի միջին արտադրողականությունը,

$L$-ը՝ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն է,

$w^*$-ը՝ գործազրկության «բնական» մակարդակն է,

$b$-ն՝ բեռնված արտադրական հզորությունների միջին ֆոնդահատույցն է,

$F$-ը՝ հիմնական կապիտալի ծավալն է,

$p^*$-ը՝ ազատ հզորությունների «բնական» ծավալն է:

Մեր կարծիքով, հիմնական միջոցների հետ կապված ցուցանիշների օգտագործումը ժամանակակից պայմաններում քիչ տեղեկատվատուն է և չեն կարող հիմք հանդիսանալ տարածաշրջանային մակարդակով ՍՏՆ-ի գնահատման համար, որն ունի մի քանի պատճառներ:

1. Դժվար է որոշել, թե նախկին (խորհրդային) ժամանակների համեմատ որքան համարժեք է հիմնական ֆոնդերի ժամանակակից արժեքի գնահատականը, քանի որ եթե դրանցով արտադրվող արտադրանքն իրացվում է ընթացիկ (շուկայական) գներով, ապա հիմնական ֆոնդերի ընթացիկ արժեքը գործնականում անհայտ է (վերագնահատման գործակիցների միջոցով հիմնական ֆոնդերի վերագնահատումը միայն ցույց է տալիս դրանց շուկայական գների փոփոխության ընդհանուր միտումները, այլ ոչ թե դրանց իրական կամ օբյեկտիվ շուկայական արժեքը):

2. Վերագնահատումն ի վիճակի չէ ճիշտ արտացոլել կոնկրետ օբյեկտների տեխնիկական և որակական վիճակը, նույնիսկ այն տարածաշրջաններում, որոնք ունեն դրանց վերականգնողական միևնույն (կամ շատ մոտ) արժեք, որպես կանոն, հիմնական ֆոնդերն էականորեն տարբերվում են միմյանցից ինչպես տեխնիկական, այնպես էլ որակական ցուցանիշներով:

3. Ձեռնարկություններն ու կազմակերպությունները ներկայումս կարող են կիրառել հիմնական ֆոնդերի հաշվառման քաղաքականության տարբեր մոտեցումներ՝ ի տարբերություն նախկին ժամանակների, երբ հիմնական ֆոնդերի գնահատման մեթոդիկան միասնական էր, ինչը նույնպես աղճատում էր հիմնական ֆոնդերի արժեքային համամասնությունները:

4. Շատ մեծ է չօգտագործվող ֆոնդերի տեսակարար կշիռը, որի պատճառով չի կարելի համադրել տարբեր տարածաշրջաններում օգտագործված հիմնական ֆոնդերի գծով ներուժը (անուղղակի ձևով, իհարկե, դա կարելի է կատարել՝ ելնելով 90-ական թվականների սկզբին տեղի ունեցած արտադրության անկման մեծությունից, սակայն, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է այդ գնահատականն առանձնացնել և դիտարկել առանձին փուլով և չներառել այն բալային գնահատման մեջ, որը բնութագրում է ընթացիկ ցուցանիշները):

Չնայած պոտենցիալ ՀՆԱ-ի կամ տարածաշրջանի ներքին արդյունքի (ՏՆԱ)՝ գնահատման նշանակությունը չի կարելի անտեսել, այնուամենայնիվ, մեր կարծիքով, դրանից դժվար է միանշանակ եզրակացությունների հանգել: Նախ և առաջ ակնհայտ է, որ գոյություն ունեցող հզորությունները ստեղծվել են միանգամայն այլ պայմաններում, և առաջին հերթին՝ ծախքերի (էժան հումքի, էներգիայի) այլ կառուցվածքի առկայության պայմաններում: Եթե, օրինակ, որևէ մարզում գոյություն ունեն չօգտագործվող զգալի հզորություններ, ապա դա դեռևս չի նշանակում, որ ժամանակակից պայմաններում դրանք կարող են օգտագործվել, քանի որ նախկինում այդ ձեռնարկությունների համար հումք մատակարարող ձեռնարկությունները փոխել են իրենց պրոֆիլը կամ դադարել են գոյություն ունենալուց: Հաշվի առնելով անցումային շրջանի առանձնահատկությունները՝ շատ դժվար է ասել, թե ինչ միտումներ ունի Հայաստանում արտադրության ճյուղային կառուցվածքի զարգացման գործընթացը՝ ճգնաժամից դուրս գալուց հետո: Արտասահմանյան մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ չօգտագործվող հիմնական ֆոնդերի «դեն նետումը» և տնտեսության վերամասնագիտացումն այնքան էլ անհավանական չէ, ուստի, հաշվի առնելով վերը նշվածը, մենք կհրաժարվենք ՍՏՆ-ի համեմատական գնահատման ժամանակ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի վերաբերյալ տեղեկատվության ուղղակի օգտագործումից:

ՍՏՆ-ի գնահատման առաջարկվող մեթոդների էական թերություններից մեկը կայանում է նրանում, որ դրանք, որպես կանոն, հիմնվում են դժվար ֆորմալիզացվող ցուցանիշների վրա, և նույնիսկ այնպիսիների, որոնց գծով ընդհանրապես բավարար տեղեկատվական բազաներ գոյություն չունեն: Այսինքն, առկա է մեթոդիկայի ունիկալության խնդիրը, որը խանգարում է դրա «բազմացմանը» և լայնորեն օգտագործմանը: Մասնավորապես, դա վերաբերում է բնական ռեսուրսների ներուժի շատ բաղադրիչների տնտեսական գնահատմանը:

Հակառակ «երեսը» կամ մոտեցումը կայանում է բոլոր տարածաշրջանների համար ունիֆիկացված մոտեցման (մեթոդի) կիրառման մեջ՝ առանց հաշվի առնելու այդ տարածաշրջանների առանձնահատկությունները: Օրինակ՝ մեկ մարզում գների բարձր մակարդակը հանգեցնում է համամասնությունների աղճատմանն ինչպես հանրապետության տարածաշրջանների միջև համեմատությունների, այնպես էլ երկրի մասշտաբով միջին մեծությունների օգտագործման ժամանակ:

Մասնավոր ցուցանիշների կազմի ընտրության խնդիրը մենք առաջարկում ենք լուծել համակարգերի տեսության մի քանի, մասնավորապես, գործոնների անհրաժեշտ բազմազանության, նվազագույն բավարարության և նպատակային կողմնորոշվածության սկզբունքների կիրառման հիման վրա:

Գործոնների վերլուծության համար, որոնք պայմանավորում են տարածաշրջանի ՍՏՆ-ի մակարդակը, այդ գործոնները սկզբնական շրջանում կբաժանենք 4 հիմնական բլոկների՝ տնտեսության արդյունա-

վետության, տնտեսական գործունեության մասշտաբի (զարգացման մակարդակի), սպառման մակարդակի (կյանքի մակարդակի) և բնակչության որակի բլոկների: Ակնհայտ է, որ առաջին երեք բլոկներն էականորեն կապված են մեկը մյուսի հետ, այսինքն՝ տնտեսության արդյունավետությունը որոշում է կյանքի մակարդակը և տնտեսական գործունեության մասշտաբները, ուստի տվյալ դեպքում առանցքային գործոնի առանձնացումը բավականին դժվար է: Մեր կարծիքով, ինչպես ներկայումս, այնպես էլ հեռանկարում այդպիսի գործոն է հանդիսանում արտահանման ցուցանիշը, իսկ որպես «հակագործոն», որը կապված է արդյունավետության ցուցանիշների հետ բացասական կապով, հանդես է գալիս գործազրկության մակարդակը:

Արդյունքում, տարածաշրջանի ՍՏՆ-ի վարկանիշի կառուցման նպատակով տեղեկատվությունը կբաժանվի 6 բլոկների:

<u>Բնակչության բնութագրերը</u>: Ցուցանիշների այս խմբում պետք է արտացոլվեն առաջին հերթին տարածաշրջանի որակական կողմերը: Համեմատաբար կարևոր ցուցանիշ է հանդիսանում բնակչության կրթական մակարդակը: Միջազգային վիճակագրական պրակտիկայում այս առումով օգտագործվում է ուսման տարիների քանակը, իսկ մեր հայրենական վիճակագրության մեջ այն դեռևս չի հաշվարկվում: Մեր կարծիքով, որպես դրա համանման ցուցանիշ (անալոգ) կարող է հանդես գալ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը: Մյուս բնութագրիչը, որը լուսաբանման կարիք ունի, հանդիսանում է բնակչության բնական աճը: Հայտնի է, որ այս երկու ցուցանիշները, որպես կանոն, կապված են հակադարձ համեմատական կապով, այսինքն՝ բարձր ծնելիությունը բնորոշ է գյուղական բնակչությանը, որտեղ ցածր է կրթական մակարդակը, իսկ քաղաքներում բարձր եկամուտներ և կրթական բարձր մակարդակ ունեցող խավի մոտ ծնելիության մակարդակը ցածր է: Տարբեր ուղղություններ ունեցող այս գործոնների զուգակցումը տալիս է հետազոտության նպատակի համար բնակչության օպտիմալ բնութագիրը: Ժամանակակից պայմաններում կրթական մակարդակը հանդիսանում է այնպիսի գործոն, որը կանխորոշում կամ պայմանավորում է աշխատուժի արդյունավետությունը, և այս առումով մարդկային ներուժին ցուցաբերված ոչ բավարար ուշադրությունը կարող է հանգեցնել դրա արագ դեգրադացմանը, իսկ արդեն մոտ ապագայում դրա ցածր մակարդակը կարող է տնտեսության զարգացումն արգելակող գործոն դառնալ:

<u>Բնակչության տնտեսական ակտիվությունը</u>: Այս բլոկը կարող է բնութագրվել բնակչության տնօրինման տակ գտնվող սեփականության ծավալներով և փաստացի աշխատաժամանակի քանակով: Հայկական վիճակագրությունն այս ցուցանիշների գծով նույնպես համարժեք պատկերացումներ չի տալիս՝ կապված ոչ ֆորմալ զբաղվածության մեծ ծավալների առկայության և սեփականության վերաբերյալ ամբողջական տվյալների բացակայության հետ: Անուղղակի ձևով այս մասին կարելի է դատողություններ անել, օրինակ, մասնավոր սեփականության իրավունքով առկա հողերի ծավալների, տնտեսության մասնավոր հատվածում և փոքր ու միջին բիզնեսում զբաղվածների թվաքանակի, մասնավոր ձեռնարկություններում ներդրումների քանակի և նմանատիպ այլ ցուցանիշների միջոցով: Մյուս ակտիվները (եկամուտ բերող) կամ հաշվի չեն առնվում կամ էլ դժվար մատչելի են բնակչության քիչ թե շատ լայն շերտերի համար՝ շուկայական ենթակառուցվածքների թերզարգացման ընդհանուր մակարդակի պայմաններում:

Որպես այս բլոկի ցուցանիշներ՝ առաջարկում ենք ընտրել մասնավոր հատվածում զբաղվածների թվաքանակը, փոքր ձեռնարկություններում զբաղվածների թվաքանակը և մասնավոր ձեռնարկություններում կատարված ներդրումների ծավալները: Չնայած մի շարք հետազոտություններ վկայում են, որ մասնավոր հատվածի զարգացման ցուցանիշները դիտարկվող ժամանակահատվածում կյանքի մակարդակի և տնտեսության մասշտաբի ցուցանիշների հետ ավելի շուտ կապված են բացասական կապով, այդուհանդերձ, ՍՏՆ-ի կազմում դրանց արտացոլման անհրաժեշտությունը պայմանավորված է, այսպես կոչված, «ռազմավարական» նկատառումներով: Նախ և առաջ, դա ցույց է տալիս նորարարությունների նկատմամբ տարածաշրջանի տնտեսության ընկալունակության աստիճանը, որը հատկապես նշանակալի է պլանային տնտեսությունից ազատական տնտեսական մոդելին անցման դեպքում: Երկրորդ, երկարաժամկետ հեռանկարում մասնավոր հատվածի զարգացումը նպաստում է տնտեսության կայունության մակարդակի բարձրացմանը և արտասահմանյան ներդրումների ներգրավմանը, գործարար կապերի զարգացման համար դիտարկվում է որպես բարենպաստ ֆոն:

Ցուցանիշների համեմատաբար կարևոր բլոկ է հանդիսանում <u>բնակչության կյանքի մակարդակի</u> բնութագիրը: Այստեղ ցուցանիշների հավաքածուն բավականին ստանդարտ է, և կարծում ենք՝ լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չի զգացվում:

Մյուս բլոկը՝ անցումային տնտեսության յուրահատուկ պայմաններում աշխատող <u>արտադրությունը</u>, պետք է բնութագրել ըստ երկու ուղղությունների՝ <u>տնտեսական գործունեության մասշտաբների</u> և <u>դրա արդյունավետության</u>: Դասական ընկալման համաձայն՝ այս ցուցանիշների միջև առկա է սերտ կապ. արդյունավետ արտադրությունն ընդլայնվում է, իսկ ոչ արդյունավետ արտադրությունը՝ փակվում: Անցումային տնտեսության պայմաններում կարող են գոյություն ունենալ նաև ոչ արդյունավետ արտադրություններ, որոնց պատճառով անհրաժեշտ է այս ցուցանիշները դիտարկել երկու տեսանկյունից (չափման երկու մակարդակներում): Որպես արտադրության մասշտաբի ցուցանիշներ՝ մենք կվերցնենք արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների ծավալները, ֆինանսավորման սեփական աղբյուրների հաշվին ներդրումների, ինչպես նաև կատարված հարկային վճարումների ծավալները: Վերջին ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ հարկերը հավաքվում են գործունեության բոլոր տեսակներից, ինչը թույլ է տալիս առավել լրիվ արտացոլել տնտեսական գործունեության ծավալները: Իսկ արդյունավետության գնահատման համար կօգտագործենք այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ բնակչության մեկ շնչի հաշվով շահույթը, բնակչության մեկ շնչի հաշվով կուտակված արտասահմանյան ներդրումները, բնակչության մեկ շնչի հաշվով արտահանման ծավալը և գործազրկության մակարդակը, ինչպես նաև ֆինանսական ցուցանիշը՝ ժամկետանց կրեդիտորական

պարտքերի ծավալը: Ենթադրվում է, որ ինչքան բարձր է տարածաշրջանում արտադրության արդյունավետությունը, այնքան լավ են դրա զարգացման հեռանկարները:

Համեմատաբար դժվար ֆորմալիզացվող, սակայն միաժամանակ տարածաշրջանի կարևոր բնութագրիչներից է հանդիսանում տարածաշրջանային միջավայրի որակը: Դրա տակ հասկացվում է գործոնների լայն սպեկտոր, մասնավորապես այնպիսի գործոնների, ինչպիսիք են ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը, կառավարման որակը (տեղական իշխանությունների քաղաքականությունը), բնական միջավայրի վիճակը, բնակչության առողջությունը, սոցիալական լարվածությունը և այլն: Տարածաշրջանային միջավայրի վիճակը միաժամանակ հանդիսանում է ինչպես տնտեսական զարգացման կարևոր գործոն, այնպես էլ դրա արդյունք: Նշված ցուցանիշներից շատերը դժվար ֆորմալիզացվող են (օրինակ՝ կառավարման որակը): Մեր կարծիքով, այդ նպատակով կարելի է օգտագործել կյանքի սպասվող տևողության, հանցավորության աստիճանի և միգրացիայի սալդոյի ցուցանիշները: Սոցիալական բնութագրերը հաշվի առնելիս անհրաժեշտ է մրցակցության ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքների առկայությունը, որոնք, մասնավորապես, հանգեցնում են սոցիալական բացասական հետևանքների: Այս առումով, կարելի է խոսել մրցակցայնության «օպտիմալ» այն մակարդակի մասին, որին տվյալ սոցիումը կարող է «համակերպվել»: Ինչ վերաբերում է ենթակառուցվածքային յուրացվածության բնութագրման ցուցանիշներին, ապա այս առումով առաջարկում ենք օգտագործել կարծր ծածկույթով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների խտության ցուցանիշը՝ տարածաշրջանային մեկ միավորի հաշվով: Նշենք նաև, որ նշված բոլոր ցուցանիշներն արտացոլում են նաև տարածաշրջանային գրավչության մակարդակը:

Այս մոտեցումներն ըստ առանձին գործոնների՝ տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատման համար պայմանավորել են ցուցանիշների հետևյալ համակարգի ընտրությունը:

1) Բնակչության որակի ցուցանիշներ՝
- ծնելիությունը (պրոմիլներով),
- բարձրագույն կրթությամբ 15 տարեկանից բարձր անձանց թվաքանակը (քաղաքային բնակչության 1000 մարդու հաշվով):

2) Բնակչության տնտեսական ակտիվության ցուցանիշներ՝
- գյուղմթերքների արտադրության ընդհանուր ծավալում բնակչության անհատական տնամերձ տնտեսությունների տեսակարար կշիռը (%-ներով),
- մասնավոր հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը (%-ներով տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվի նկատմամբ),
- արտադրական ոլորտի մասնավոր ձեռնարկություններում արտադրական կապիտալ ներդրումները (մլն. դրամ/մարդ):

3) Բնակչության կյանքի մակարդակի (սպառման) ցուցանիշներ՝
- 1000 մարդու հաշվով անձնական օգտագործման ավտոմեքենաների թվաքանակը (այս ցուցանիշը տարածաշրջանի բնակչության կենսամակարդակը համեմատաբար ավելի լավ է բնութագրում, քան պաշտոնապես հայտարարագրվող, և այդ իսկ պատճառով նվազ ցույց տրվող եկամուտների մակարդակը),
- բնակչության մեկ շնչի հաշվով մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը (մլն. դրամ), որը հանդիսանում է ինչպես ապրանքային հոսքերի, այնպես էլ բնակչության ֆինանսական միջոցների ինդիկատոր,
- բնակչության մեկ շնչի հաշվով շահագործման հանձնված բնակմակերեսը (քառ. մետրերով), որը համեմատաբար ավելի լավ է բնութագրում սպառման մակարդակը, քան ուղղակի բնակարանով ապահովվածությունը, քանի որ կուտակված բնակֆոնդի որակը շատ խիստ տարբերվում է,
- տարվա վերջի դրությամբ բնակչության դրամական եկամուտների և կենսապահովման նվազագույն բյուջեի հարաբերակցությունը, որը համեմատաբար հաճախ օգտագործվող անուղղակի ցուցանիշ է և բնութագրում է տարածաշրջանի բնակչության գնողունակությունը՝ համեմատած տվյալ տարածաշրջանի մակարդակով նվազագույն անհրաժեշտ բարիքների հավաքածուի արժեքի հետ:

4) Տնտեսական գործունեության ծավալների (մասշտաբի) ցուցանիշներ՝
- բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտադրությունը (մլն. դրամ մեկ շնչի հաշվով),
- բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը (մլն. դրամ մեկ շնչի հաշվով),
- ֆինանսավորման սեփական աղբյուրների հաշվին կապիտալ ներդրումների ծավալները (մլն. դրամ մեկ շնչի հաշվով),
- բնակչության մեկ շնչի հաշվով վճարված հարկերի ծավալները (մլն. դրամ մեկ շնչի հաշվով), որն անուղղակի է բնութագրում տնտեսական գործունեության մասշտաբները և կարող է դիտարկվել որպես ՏՆԱ-ի անալոգ:

5) Տնտեսության արդյունավետության ցուցանիշներ՝
- բնակչության մեկ շնչի հաշվով գործունեության բոլոր տեսակների գծով շահույթի ծավալները (մլն. դրամ մեկ շնչի հաշվով),
- բնակչության մեկ շնչի հաշվով կուտակված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները (մլն. դոլար մեկ շնչի հաշվով), որը բնութագրում է բիզնեսի վարման համար տարածաշրջանի գործարար միջավայրի բարենպաստության (անբարենպաստության) աստիճանը, քանի որ օտարերկրյա ներդրողներն

անհամեմատ ավելի զգայուն են այս առումով, քան հայրենական ներդրողները, ինչպես նաև բնութագրում է մրցունակ արտադրությունների և հեռանկարային ծրագրերի առկայությունը,

- բնակչության մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները (մլն. դոլար մեկ շնչի հաշվով), որն արտացոլում է աշխարհատնտեսական կապերում տվյալ տարածաշրջանի ներգրավման աստիճանը, ինչպես նաև դրա հիմնական ճյուղերի մրցունակության ընդհանուր մակարդակը (տարածաշրջանում տնտեսական աճի կայունության ապահովման տեսանկյունից տվյալ գործոնը հանդիսանում է ամենակարևորներից մեկը),
- գործազրկության մակարդակը (գործազուրկների թվաքանակը տոկոսներով տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ՝ տարեվերջի դրությամբ),
- ժամկետանց կրեդիտորական պարտքերի ծավալը (մլն. դրամ մեկ շնչի հաշվով):

6) Տարածաշրջանային միջավայրի որակի ցուցանիշներ, որոնք ներառում են ինչպես ենթակառուցվածքային յուրացվածությունը, այնպես էլ սոցիալական չափանիշներ, այդ թվում՝

- կարծր ծածկույթով ավտոմոբիլային ճանապարհների խտությունը (կիլոմետրերով 1000 քառ. մետրի հաշվով), որն արտացոլում է նաև ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում բիզնեսի զարգացման հնարավորությունները,
- հանցավորության մակարդակը (հանցագործությունների թվաքանակը 100 հազ. մարդու հաշվով), որը բնութագրում է հասարակության սոցիալական բարեկեցության աստիճանը,
- տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը (տարիներով), որը հանդիսանում է կյանքի մակարդակը բնութագրող ստանդարտ ցուցանիշ,
- միգրացիայի սալդոն (պրոմիլներով), որը ժողովրդագրական դինամիկայի և տարածաշրջանային զարգացման կարևոր ցուցանիշ է հանդիսանում և կարող է դիտարկվել որպես տարածաշրջանի բարենպաստության (անբարենպաստության) մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ,
- մանկամահացությունը (1000 ծնվածների հաշվով), ինչը նույնպես ժողովրդագրական կարևոր ցուցանիշ է և բնութագրում է կյանքի որակը:

Մասնավոր ինդեքսները ($L_k$) յուրաքանչյուր կոնկրետ k ցուցանիշի (k = 1, 2, ....m) համար առաջարկում ենք հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$L_k = (A_i - A_{min}) / (A_{max} - A_{min}) \qquad (1),$$

որտեղ՝

$A_i$ - ն՝ i-րդ տարածաշրջանի y ցուցանիշի մեծությունն է (i = 1, 2, ....m),

$A_{max}$ - ը՝ ցուցանիշի առավելագույն մեծությունն է,

$A_{min}$ - ը՝ ցուցանիշի նվազագույն մեծությունն է:

Որպես կանոն՝ լավագույնը հանդիսանում է առավելագույն ցուցանիշը, սակայն որոշ դեպքերում որպես այդպիսին՝ հանդես է գալիս նվազագույն ցուցանիշը, օրինակ՝ հանցավորության աստիճանը, գործազրկությունը և այլն: Այս դեպքում բանաձևը ստանում է հետևյալ տեսքը՝

$$L_k = 1 - (A_i - A_{min}) / (A_{max} - A_{min}) \qquad (2):$$

Երկու դեպքում էլ ինդեքսի մեծությունը գտնվում է 0-ից 1-ի սահմաններում, և ինչքան մեծ է ինդեքսի մեծությունը, այնքան ցուցանիշի մեծությունը մոտ է լավագույնին:

Յուրաքանչյուր կոնկրետ տարածաշրջանի համար բաղադրիչային (կոմպոնենտային) ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$L_j = \sum L_k / N \qquad (3),$$

որտեղ՝

N - ը՝ տվյալ ինդեքսում ներառվող ցուցանիշների քանակն է:

Տարածաշրջանի ՍՏՆ-ի մակարդակի ինտեգրալ վարկանիշը ($Y_i$) ստացվում է բաղադրիչային ինդեքսների պարզ գումարման ճանապարհով, ընդ որում՝ որքան այն մեծ է, այնքան տարածաշրջանի ներուժը մեծ է:

$$Y_i = \sum L_j \qquad (4):$$

Գործոնների կշիռները վերցված են նույնը, քանի որ, մեր կարծիքով, օգտագործվող բոլոր ցուցանիշները հավասարապես կարևոր են ՍՏՆ-ի գնահատման համար, և չի կարելի ձևակերպել կշռային գործակիցների տարբերակման հստակ չափանիշներ: Դրանց կազմում, օրինակ, կան ավելի փոփոխական և ավելի իներցիոն ցուցանիշներ, սակայն ընդհանրական առումով դրանք թույլ են տալիս ճկուն կերպով «հետ մղել» այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում տարածաշրջանների տնտեսական և սոցիալական ոլորտներում:

Առաջարկված մեթոդով որոշվող ինտեգրալ վարկանիշերը չափում են տարածաշրջանների ՍՏՆ-ի միջտարածաշրջանային տարբերակման մակարդակը և ՍՏՆ-ն բնութագրում են անուղղակի եղանակով՝ զարգացման ձեռք բերված մակարդակի և զարգացման դինամիկայի (որպես տարածաշրջանի մրցակցային առավելությունների իրացման) միջոցով: Այն դեպքում, երբ տարածաշրջանի ՍՏՆ-ն որոշվում է ժամանակի որոշակի պահի դրությամբ առկա տվյալների հիման վրա, հաշվարկվող ցուցանիշն արտացոլում է տարածաշրջանի դիրքը՝ հաշվի առած միայն համապատասխան ցուցանիշների տարածքային տարբերակումը, իսկ որոշակի ժամանակահատվածի համար հաշվարկված տարածաշրջանի ՍՏՆ-ի ցուցանիշների համադրումը ցույց է տալիս համապատասխան ցուցանիշների դինամիկան:

Հարկ է նշել մեթոդոլոգիական այն դժվարությունը, որն առաջ է գալիս սկզբունքորեն տարբեր բնույթի օբյեկտների (օրինակ՝ այնպիսի քաղաքների, ինչպիսիք են Երևանը կամ Գյումրին) և գյուղական համայնքների համեմատության դեպքում: Սրա արդյունք կարող է լինել այն, որ քաղաքների ներուժի ցուցանիշները

որոշ չափով արհեստականորեն ուռճացված կլինեն, քանի որ որոշ ցուցանիշներ (մասնավորապես՝ կրթության մակարդակը) վերցված են միայն քաղաքային տարածաշրջանների համար: Բացի այդ, ամենամեծ տատանումներ (վարիացիաներ ունեցող) կարող են ունենալ կյանքի մակարդակի ցուցանիշները, առաջին հերթին՝ շահագործման հանձնված բնակմակերեսի, ինչպես նաև շահույթի, մասնավոր հատվածում զբաղվածության և միգրացիոն սալդոյի ցուցանիշները: Միաժամանակ, ենթադրվում է, որ արդյունաբերական արտադրության, արտահանման, հարկային մուտքերի, հանցավորության մակարդակի և կրեդիտորական պարտքերի ծավալների ցուցանիշների տարածքային բաշխումը բավականին կայուն բնույթ կունենա գրեթե բոլոր տարածաշրջանների համար:

Ստացված մեծությունների բովանդակային մեկնաբանությունը կարող է լինել հետևյալը. հաշվարկված ինդեքսի մեծությունը ցույց է տալիս տարածաշրջանի դիրքը՝ համեմատած լավագույն և վատագույն արդյունքների հետ: Օրինակ՝ եթե մասնավոր ինդեքսի (ենթադրենք՝ արդյունաբերական արտադրության մակարդակը) հավասար է 0,5-ի, ապա դա նշանակում է, որ այդ ցուցանիշով տարածաշրջանը միջին դիրք է գրավում սանդղակում, այլ ոչ թե այն, որ դրանում արդյունաբերական արտադրության մակարդակը 2 անգամ փոքր կամ մեծ է էքստրեմալ (առավելագույն հնարավոր) մեծություններից: Բոլոր տարածաշրջանների համար ինդեքսի միջին մեծությունն արտացոլում է ցուցանիշների տարբերակումը, այսինքն՝ ինչքան այն մոտ է 0-ին, այնքան ուժեղ են տարբերակված ցուցանիշները և հակառակը:

Երևան քաղաքի և մյուս տարածաշրջանների միջև կարող են նկատվել կտրուկ տարբերություններ, որը Երևանի (այդ թվում՝ նաև որպես մայրաքաղաքի) յուրահատկության արդյունք է: Առաջին հերթին ֆինանսական հոսքերի կուտակման շնորհիվ Երևանը մյուս տարածաշրջանների համեմատությամբ տիրապետում է հսկայական շուկայի: Շահույթի մեծությունը, որը ստացվում է մայրաքաղաքի ձեռնարկություններից և կազմակերպություններից կողմից և դրանցից վճարված հարկերի ծավալներն իրենց մեջ ներառում են, այսպես կոչված, «դիրքային ռենտա», քանի որ այլ տարածաշրջաններում ստացված շահույթը շատ հաճախ «գրանցվում է» Երևանում, որտեղ գտնվում են տարածաշրջաններում գործունեություն ծավալող գլխամասային ընկերությունները կամ ձեռնարկությունների կառավարման մարմինները: Բացի այդ, Երևանում ցուցանիշների բարձր մեծությունները մասնակիորեն հանդիսանում են նաև վիճակագրական հաշվառման արդյունք: Օրինակ, Երևանում ապրանքաշրջանառությունը ձևավորվում է հիմնականում այն մարդկանց շնորհիվ, որոնք ժամանակավորապես աշխատում են մայրաքաղաքում կամ հանդիսանում են զբոսաշրջիկներ և այլն, այսինքն՝ ճոճանակային միգրացիայի շնորհիվ: Այսինքն՝ տվյալ ցուցանիշի ձևավորման գործում ներդրում են ունենում ավելի շատ թվով մարդիկ, քան Երևանի մշտական բնակչությունն է, ինչը վիճակագրությամբ չի կառավարվում և ձևավորում է կյանքի մակարդակի ցուցանիշների բավականին բարձր մեծություններ:

**ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱՋՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.թ.*

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ցանկացած տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ներուժի (ՍՏՆ) մեծությունը հիմնականում բնութագրվում է նրա պոտենցիալ ռեզերվներով, տարածաշրջանում (մարզում, համայնքում) առկա ռեսուրսների ամբողջ համալիրի ներգրավման հնարավորություններով, դրա կառուցվածքի առանձնահատկությունների, աշխարհագրական դիրքի, տնտեսական աճի իներցիայի, սոցիալական ու ինստիտուցիոնալ գործոնների օգտագործմամբ: Այս առումով, ***շուկայական տնտեսության պայմաններում տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատումը նախ և առաջ պետք է կայանա տարածաշրջանային զարգացման այն գործոնների գնահատման մեջ, որոնք արտացոլում են տվյալ տարածաշրջանի մրցակցային առավելությունները:*** Համապատասխանաբար, տարածաշրջանի ՍՏՆ-ի վերլուծությունը պետք է կառուցվի տարածքային-տնտեսական համակարգի երեք բաղկացուցիչների՝ տարածքի, բնակչության և տնտեսության քանակական ու որակական բնութագրիչների քննարկման միջոցով:

Բնակչության բնութագրումը հնարավոր է կյանքի որակի և կյանքի մակարդակի տեսանկյուններից, իսկ տնտեսության բնութագրման համար օգտագործելի են դրա մասշտաբները, արդյունավետության մակարդակը և այլն: Խնդիրն ավելի բարդ է տարածքի գնահատման տեսանկյունից: Մեր կարծիքով, որպես դրա բնութագրիչներ՝ կարող են հանդես գալ տարածքի տնտեսա-աշխարհագրական դիրքը (որը բնութագրում է արտաքին միջավայրի տեսանկյունից դրա մրցունակությունը) և տարածքի ենթակառուցվածքային յուրացման կամ զարգացման մակարդակը (ներքին միջավայրի զարգացման մակարդակը): Բոլոր ցուցանիշները պետք է դիտարկվեն տարածաշրջանային մյուս (համանման) օբյեկտների ցուցանիշների համադրման մեջ, քանի որ մրցունակությունը հարաբերական ցուցանիշ է և իմաստ ունի միայն տնտեսական տվյալ ագենտի կամ տարածաշրջանային համակարգի ցուցանիշներն այլ ագենտների (տարածաշրջանային համակարգերի) ցուցանիշների հետ համեմատության դեպքում: Այս կապակցությամբ վերլուծության տրամաբանական ընդհանուր սխեման կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: